

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Հերթական պահանջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Շահաւանդին ճանաչում էք. Նամակ Ախալ-
քաղաքից. Նամակ Նախադրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լեւոն XIII
պապի յօդուհանդէպ. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր.—ՀԵՆՈՒՄԻՆԻՆԻ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—ԻՄ ա-
խոյեանք:

ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՆԱՋ

Գրքերի եւ ընթերցանութեան պահանջը
երբեք մեղանում չաւ մեծ չէ եղել, բայց
զանազան ժամանակներում նա արտայայտվել
է աւելի կամ նուազ չափով. երբեք չը քան-
ներ, երբ նկատվել է մի առանձին հակում
դէպի ընթերցանութիւն եւ պահանջ դէպի
գիրքը, եւ յետոյ եկել են ուրիշ շրջաններ,
երբ սառել է հետաքրքրութիւնը դէպի
տպագրական խօսքը: Սրինակ, մի հինգ-
եօթ տարի սրանից առաջ ընթերցանա-
թութեան զարգացումը կանգ առաւ մեղա-
նում, եւ գրաւորական գործը թուա-
ցաւ, բայց մի քանի տարուց յետոյ նա նո-
րից սկսեց երևան գալ, եւ վերջին երկու
տարիներում զգացվում է նկատելի ձգ-
տում դէպի ընթերցանութիւն: Ժողովուրդը
գիրքը եւ պահանջում, եւ գրաւորականը
որոնում են գրքեր՝ նկատվող պահանջին
բաւարարութիւն տալու համար: Թէ թիֆ-
լիսում, Թէ Բաքուում եւ Թէ ուրիշ քա-
ղաքներում գրաւորականութիւնը սկսում է
ընդարձակել իր գործունէութիւնը:

Սակայն նոր երևան եկող գրքերի թիւը
չաւ սահմանափակ է: Ընթերցանութեան
թիւն պահանջը չէ ստանում բաւարարու-
թիւն: Մասնաւոր շատ նկատելի է մի
կողմից փափական գրականութեան, իսկ
միւս կողմից հանրամատչելի ժողովրդական
հրատարակութիւնների պակասութիւնը:
Երբ մենք ցանկանալիս օգտվել եւրոպական
գրականութիւնից՝ մենք կը գտնենք հա-
րաւարտութիւնը հետաքրքրական
եւ ուսանելի գրութեան, որոնց կարող
էինք տալ մեր ազգայնականութեան, նրա
ընթերցանական ծարաւը յազդեցնելու հա-
մար:

Անկասկած՝ շատ լաւ կը լինէր տալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ԱՆՈՅԵԱՆԸ

(Ուսուցչի յիշատակ արանից)

VI

Միջոցն ընկել էր արդէն, երբ մենք հա-
մանք Հ. գիւղի բնիկները, Հասանը, ճիշդ
է, բայց ամենազգլաւոր դժուարութիւնը դեռ
առաջնեւն էր.—հարկաւոր էր որեւէ կեր-
պով իմաց տալ գիւղացիներին, որ զան ու մեզ
անց կացնեն չնդից, բնիկները այդ միջոց ար-
թուն պահապաններէն: Մտնելով շատ չէր կա-
րել, որովհետեւ մարդկանցից առաջ կարող էին
նկատել մեզ չնդից, եւ յարձակվել մեզ վրա նախ
անց գիւղացիք օգնութեան կը հասնէին: Ձայն
տալը նոյնպէս երկիւղալի էր.—օտարի ձայն
իսկոյն ճանաչում են չնդից եւ գալիս ձայնի
վրայ Սովորաբար այդպիսի դէպքերում եւս
կանգնում էին մի այնպիսի տեղում, որ լաւ
նկատելի լինէր բնիկներին եւ միևնոյն
ժամանակ բաւականաչափ հեռու, կապում էին
ձեռնափայտի ծայրին յատկապէս դրա համար
վերցրած բաւականաչափ մեծ, սպիտակ չորի
կտոր եւ սկսում տատանել այդ տարօրինակ
դրօշակը. գիւղացիք նախ զարմանում, ապա
հասկանում էին բանի էութիւնը եւ գալիս անց
կացնում ինձ չնդից:

Բայց այս անգամ, դժբախտաբար, արդէն
այնքան մոտ էր, որ ես ապարդիւն կերպով

ինքնուրոյն աշխատութիւններ, մանաւանդ
այնպիսիներ, որոնց նիւթը մեր երկրին է
եւ նրա ժողովուրդը. բայց քանի որ լաւ
հեղինակների եւ ինքնուրոյն տաղանդների
թիւը շատ սահմանափակ է մեզանում,
մնում է օգտվել այն առատ աղբիւրից, որ
պարունակում է իր մէջ անսպառ զանա-
գրականութեան եւ գիտութեան բոլոր
ճիւղերի վերաբերութեամբ:

Պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել
ընթերցանութեան զարգացող պահանջի
վրա եւ նրան բաւարարութիւն տալու
համար պաշար պատրաստել: Իսկ այն հա-
մակելի պահանջներից մէկն է, որի երե-
ւան գալը եւ մեծանալը ունի կոշտութեա-
կան մեծ նշանակութիւն եւ որի համար
գործ դրած աշխատանքները այնպիսի ար-
դիւնաւոր հետեւանքներ են առաջա-
ցնում, որ վարձատրում է բարոյապէս ամեն
նեղութիւնը եւ ծախքը: Ընթերցանութեա-
նի պահանջին բաւարարութիւն տալը
հերթական հարց է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՀԱՄԵԱՆԻ ՃԱՆԱՅՈՒՄ ԷՔ

(Նամակ Բագուից)

Այս օրերից մին ծանօթներէցս մէկը մօտ
եկաւ հարցրեց ինձ՝
—Շահամեանին ճանաչում էք, Ներքինին:
Երեկ ուզում էր իմանալ, Թէ ես արդեօք
ճանաչում եմ նրան անձամբ: ԶԲ որ Շահա-
մեան երեսց հօրեղծին վրա իւրեք գիտաւոր-
այն եղաւ որ նրան չը տեսնէր, կամ ակնով
որ համբաւը չը լսէր: Զայնարիտ է, կարճատե-
նեղաւ երեսցը, բայց նրա շրջը հայ արտերի
մէջ առաջին անգամ կաթիցրեց այն զգացումը
Թէ իր ծոցից կարող են մերթնել երեւել
գեղարուեստի բարձր աշխարհում:
—Չանաչում եմ, այո, —պատասխանեցի—
Փայեց՝ բայց, ախահ, չուտ անցաւ փայլը:
Ո՛ր է նա այժմ:
—Հէնց դրա համար դիմեցի ձեզ՝ որ յայ-
տնեմ նրա ուր լինելը: Նա այժմ Գանձակում է
իր քրոջ մօտ:
—Բոլոր մօտ Խնչ, հիւանդ է:
—Ամառն եկել էր քրոջ մօտ, Բանանց գիւղը,
կաղզուրվելու համար ջրային տկարութիւնից:

Զառուրդ ժամի չափ տատանում էի «գրօշակ»
եւ գրանով միայն ընկերութիւններս ծիծաղը չար-
ժումը:

—Զարմանալի է,—սրտխօսում էր օրիորդ
Թագուհին,—ուրիշ ազգեր սպիտակ դրօշակ են
բարձրացնում կուէր դաշտում միայն, եւ այն էլ
ճարահատված անձնատուր լինելիս, իսկ հայը
նոյնը անում է իր տանը, իր հայրենի սարերի
գլխին, երբ ոչ մի թշնամի չը կայ առաջին:

—Հապա չնդից, դուք պակաս թշնամի էք
կարծում նրանց:

—Ուրեմն դուք անձնատուր էք լինում չնե-
րին:

—Ինչպէս տեսնում էք: Կան դէպքեր, երբ
մարդ ստիպված է յաղթված համարել իրան
նախ չնդից, մանաւանդ երբ նրանք բազմա-
թիւ են:

—Օհ, ես չէի կարծում, Թէ դուք այդքան
քաջ էք, պարոն ուսուցիչ:

—Լաւ, ծաղրեցէք ինձ հիմա, որքան կամե-
նաք, ես յետոյ կը խօսեմ ձեզ հետ, երբ չնդից
կը բռնեն ձեր չըլաղաքանորից:

—Ի մեր Աստուծոյ, իմ խեղճ չըլաղաքանոս
առանց այն էլ տանեակ տեղերից վիրաւոր-
ված է, ինչպիսեցէ,—կէս աղերասկան եւ կէս-
ծաղրական կերպով խնդրում էր Թագուհին:
«Դրօշակը» տատանելուց ձանձրացած եւ ար-
ձակեցի ատրճանակաւ, արձագանքը դիպաւ սա-
րի այս ու այն լանջին եւ անդադարձաւ դէպի
մեզ կրկնապատկված ուժով: Իսկոյն լավեց
չնդից հալոցը. փոքր ինչ յետոյ աղմուկ ու
գոռոգոց բարձրացաւ բնիկներում:

Նա այժմ խելագար է... Մարդ չէ ճանա-
չում եւ մոլեգնում է ճրագի լոյսը տեսնելիս:
Թիֆլին տեսլ է, Թէ նա քաջառողջ է, երկար
կապրի, բայց իր հիւանդութիւնն անբուժելի է:
Քոյր եւ եղբայր երկուսն էլ աղքատ են: Քոյրը
մանրիկ որդիներով չըլապատված, ճնշված
նրանց ապրեցնելու հոգսի տակ, իսկ եղբորն
հասած այդ հարուածը նրան աւելի եւս է տա-
ռապեցնում: Զեզ դիմեցի, որ մի երկու տող
գրէք «Մշակին», խնդրելով խմբագրութիւնից՝
յանձնարարել հիւանդին ընդհանուրի կարեկցու-
թեանը: Պէտք է նրան մի բուժարանի մէջ
տեղաւորել՝ ուր հարկաւոր խնամքով պահպա-
նեն նրան:

Շահամեան խելագար, Եկմալեան խելագար.
Ճաղթված արիւնքներ, լարաբեկ քնարներ, կրկին
խորտակված անօթներ գեղարուեստի տաճա-
րում: Իբր մի տարվայ ընթացքում երեք դո՛ւ,
երեք կորուստ, երեք աղէտ.—Կարա—Մուրա-
գերեզմանի ծոցում, իսկ Եկմալեան եւ Շահա-
մեան խորտակված:

Նրանք, որոնք լեցին նրա հօգր կուրծքի
խող որոտայից ու խորհրդափակ հնչիւնները եւ
փոխիփոխ վառ գոչիւնները էլ միանալ մայր
տաճարի կամարների տակ, երբ ներկայ վեհա-
փառութիւնը օծվում էր կաթողիկոս, կը մո-
ռանան Շահամեանին: Նա այն օրերը հայի
կուրծքից իր ամենախորին զգացումներին առա-
յում հնչիւններն էր դուրս կորզում՝ չողովա-
ցնելով միաժամանակ եւ յոյսերը որպէս փայլա-
տակներ՝ որոնք հեռանում պատառտում են
ամպերի թանձրութիւնը:

Ո՛ր, խորտակված յոյսեր եւ խորտակված
երգիչ:

Այժմ կարեկցութիւն են խնդրում, խնամք,
դուրժ առ քնարն ջախջախալ:

Մի խնայեք, հայեր, տուէք, եւ դուք արժանի
կը լինէք ունենալու եւ կը ստանաք նորերը:
Նրանք կը գան կերեւն մեզ՝ մեր միւսամոլճիկ
հեռունիւնս երգելու մեր հանդէսների մէջ եւ
միտրոնորդ խորինքն հնչեցնելու մեր սրբազան
կամարների տակ:

Ա. Մ. Եզեկեան

ՆԱՄԱԿ ԱՆՈՒՔԱՆՈՒԹԻՒՆ

Փետրվարի 17-ին

Մեր թատերասէները իսպառ մոռացել են
իրանց պարտականութիւնները: Նոյն-իսկ այս

—Հայ, հայ, հայ... ձայն տուին հեռուից:
—Հայ, հաւայ, հաւայ, կրկնեցի ես, իբրեւ
արձագանք իմ թղթերի ամբողջ ոյժով:

Շնորհի հաջող արագութեամբ մօտենում էր,
այն ինչ ոչ մի գիւղացի դեռ չէր երևում:

—Հայ, չնդից ճանկն ենք ընկնելու, բացա-
բանցեց վախեցած օրիորդ Մարիամը եւ բռնեց
իմ թիֆը:

Գիշերն արդէն վրա էր հասել եւ իր անթա-
փանց—սե թողը գցել սար ու ձորի վրա. հե-
ռու պուզում էին միայն բնիկների առաջ
վառվող խորոյկները, որոնց վրա սարաւոր
կանաչ տաքացնում են երկնային կաթը: Սա-
կայն չը նայելով խաւարին՝ ես նկատեցի, որ
գունաթափված էր եւ օրիորդ Թագուհին:

—Հը՛, հիմա չէք բարձրացնի սպիտակ դրօ-
շակ, փորձեցի ես սիրտ տալ Թագուհուն, որ
սկսել էր դողդողալ ամբողջ մարմնով:

—Լաւ, դուք էլ պահաւ չէք վախենում, չը
կարողացաւ զսպել իրան Թագուհին:
Եւ յիշուէի, ես եւ զգում էի, որ սիրտս ա-
րագ—արագ բարձրաւում է եւ ձեռքս ջղաձգաբար
սեղմում ձեռնափայտը: «Ի՞նչ պատահտեմ մեզ»
—անցաւ իմ մտքից:

Շնորհի հաջող քանի գնում աւելի եւ աւելի
մօտենում էր:

—Դէ՛, մի վախենաք, հիմա կը հասնեն գիւ-
ղացիք, ձեռնափայտերը պատրաստ պահեցէք,
դիմեցի ես օրիորդներին:

Բայց նրանք արդէն վայր էին ձգել ձեռնա-
փայտերն ու ամուր կպել թիկերս: Անշուշտ
նրանք պիտի խանդարէին ինձ պաշտպանվելու
լինում:

բարեկենդանին մի կանոնաւոր ներկայացում չը
տուէին Միայն մեր եկեղեցու խմբագրութեան պ. Տ.
Տօնականեան, երկու սեռի սիրողներին երգեցիկ
խումբ կազմելով՝ փետրվարի 14-ին համերգ
տուէց աղքատ աշակերտներին օգնող ընկերու-
թեան օգնին: Համերգը բաղկացած էր երկու
բաժնից: Ընդմիջումի ժամանակ թատերասէր-
ները ներկայացրին «Վրէժ» դրամայից մի գոր-
ծողութիւն: Համերգը, բացի մի քանի երգերից՝
ընդհանրապէս բաւարար անցաւ: Համեմատա-
բար աւելի լաւ էին սօյո երգողները: Միայն
ցանկալի է, որ միշտ միևնոյն երգեր չը կրկնվեն,
այլ նոր երգեր աւելի մտցնվեն ծրագրի մէջ:
Մուտք եղաւ 70 ռուբլի:

Համերգը միևնոյն ծրագրով կրկնվեց միւս
օրը, ցերեկը, էժանացրած վճարով, յատկապէս
ժողովրդի համար: Մուտք եղաւ մօտ 15 ռ., որ
պէտք է յատկացնվի նոյն նպատակին:

Երեկ էլ թատերաստան զանիւնում մանկական
առաւօտ տեղի ունեցաւ, որը երկու սեռի բազ-
մաթիւ մանուկներ էր գրաւել: Մանուկները
ներկայացրին պ. Վ. Շահպարտեանին «Հինգ ու
խաչ» մանկական պիէսը, ապա երգեցին, պա-
րեցին ու քաղցրաւնիւք ստանալով՝ ցրվեցին
զուարթ տրամադրութեան տակ:

Ընթերցողները անշուշտ յիշում են, Թէ մի
քանի ամիս առաջ մի բախտալիս Միքիթոս
ինչպիսի խաղ էր խաղացել Չանդուրա գիւղի
տղէտ կանանց գլխին: Նորեքս այդպիսի մի
խորհրդաւոր էսկիւզով էլ երեսացել է մեր գա-
ւառի դուրսօրներին: Գործը վա գիւղում եւ
ընդարձակ կերպով շահագործել է աղէտ ժողո-
վրդի նախապաշարմունքները: Նա այս անգամ
գործել է աւելի լայն ծրագրով եւ իրան ձեռ-
ցնելով ամենաաղէտ կախարդ կամ ֆալսէֆ հազար
ու մի տեսակ կասկածներ մանկապուշտեաններ
է արել եւ փող դուրս կորզել: Հէնց միայն իբրեւ
Թէ Ալեքսանդրօպօլից բերվելիք դեղերի համար
որքան փող է առել:

Տանուտէրը մի ինչ—որ կուէ պատճառով նրան
կալանաւորում է. բայց մի ջերմեանը դուրս-
բոր երախտարութեամբ նրան դուրս է հա-
նում եւ փախցնում, որից յետոյ պարտաւոր գնում
է Գործը վա եւ ընտելութիւն սկսում: Դուրս է
գալիս, որ սա հէնց ինքը Չանդուրայի հերոսն
է, Կարսի նահանգի մարտնչներից, Պիլօվարով
աղղանումով, եւ լաւ գիտէ ուսուցէին, հայրենի,
թուրքերէն եւ վրացերէն: Յոյս կայ, որ գիւղա-
ցիներին հարստանալուց այդ խաբարն կը գտնվի
եւ արժանի պատիժը կրկնէ:

Յանկարծ ես նկատեցի մի անագին ժայռ,
որ փոքր ինչ հեռու մեզանից սկիւն էր տալիս:
Աստուած գիտէ, Թէ որ տիտաններն երբեմն
չլրտում են այդ նսկայ մենաւոր ժայ-
ռերը լեռների կանաչազարդ, փափուկ կո-
ղերին, ուր կարծես նրանք ամենին չը պէտք
է դոյութիւն ունենային: Կայծակի արագու-
թեամբ մի միտք փայլեց իմ մէջ: Ես, համա-
րեալ, քալել տալով տարայ օրիորդներին ժայռ
մօտ, նստեցրի նրանց ժայռի գոգաւոր խորու-
թեան մէջ, իսկ ինքս՝ հաստ ձեռնափայտը
ձեռքս՝ կանգնեցի նրանց առաջ, Ետեից եր-
կիւղ չը կար, համարեաւ նախ կողքերից, մնում
էր պաշտպանել նրանց առաջից: Օրիորդները
ատամ—ատամի էին խիւռ:

—Հաւայ, հայ, շարունակ լավում էր գիւղա-
ցիներին ձայնը:

—Հայ, հաւայ, պատասխանում էի ես:
Երբ ես որոշակի կերպով տեսայ առաջին
չանք եւ նրա ետեից միւսների հազիւ—հազ
կատելի ստուերները՝ մի տեսակ կատաղու-
թիւն եկաւ վրաս: Ես պատրաստ էի ինքս
յարձակվել նրանց վրա: Բայց յիշելով, որ
մի քալ անգամ անկարող եմ փոխել, մնա-
ցի տեղումս կանգնած: Հինգ—վեց անգին
գամիւններ թափվեցին ինձ վրա: Նրանց հա-
լոցն ակնով էր լայացնում: Ամենայն ուժով ու
արագութեամբ, առանց զգալու եմ արածս,
եւ թափ էի տալիս ձեռնափայտս, որ փոփո-
խակի դիպում էր ժայռին երբեմն ալ, երբեմն
ձախ կողմից: Օրիորդներն իմ ետեւում լաց էին
լինում:

Մինչ ևս պէտք է գիւղացիները իրանց անա-
հաւատութեան չորհրդով կռիւնքի տակ դրոշմեան
մէջ ընկնին և ծաղրի առարկայ դառնան։ Կեանս-
քում պատահող այսպիսի երեւոյթները ծիծաղե-
լի կը լինէին, եթէ այնքան տխուր չլինէին։
Գիւղացիների միամտութիւնը և անհաւատու-
թիւնը, այս, ծիծաղելի կը լինէին եթէ նրանք
խաւարի իշխանութեան անմիջական հետե-
անքը չը լինէին, խաւարի, որի մէջ կարծես
անվերջ պէտք է խարխուլէ գիւղը, գիւղացին...
Եւ զգալիաւորաբար այսպիսի ծիծաղելիք և տխուր
գէպերը բոլորովին բացառութիւններ չեն, շատ
անգամ են այսպիսի կռիւնքներ պատահում,
որոնք յաճախ վերջանում են ողբերգութիւննե-
րով։ Եւ միթէ կարելի է միմիկաբար, որ XX
դարում գէթ մեր քաղաքներում չեն պատահում
այսպիսի տխուր գէպեր, որ գէթ մեր քաղա-
քացու ուղիղը ազատ է անթափանցելի խաւա-
րից։

Սալիւստիան

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԴՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 20-ին

Թող տուէք Մշակի միջոցով հրապարակ
հանել մի գէպը, որ թէն փոքրիկ է, բայց,
իմ կարծիքով, կարող է հետաքրքրական լինել
իբրև մի նմուշ մեր գրական բարեբերից։

Պետերբուրգում, ինչպէս արդէն գիտեն Մը-
շակի ընթերցողները, լոյս տեսաւ Քիւրա-
րուստական Ալբոմը, որ նուիրված է Ալվա-
զովսկու յիշատակին։ Այդպէս եւ էլ ունեւ մի
յօդուած—Ալվազովսկու կենսագրութիւնը, որ
գետնված է Ալբոմի սկզբում։ Թէ այդ գը-
րուածքը ինչ է պատկանում, ընթերցողը կա-
րող է իմանալ Ալբոմի բովանդակութիւնից։
Փողովածուի պ. պ. խմբագիրները չեն բա-
նաճնել զննել իմ անունը գրուածքի տակ,
մինչդեռ միւս յօդուածագիրների անունները
գրված են en toutes lettres.

Հարցը, ի հարկէ, այս չէ, և ես այդ հարցա-
մանքի վրա ուշադրութիւն էլ չեմ դարձնում,
լաւ իմանալով, որ իւրաքանչիւր հայ մի բան
անելիս անպատճառ պիտի իր սեփական «փո-
րիկեքան» ունենայ։ Եթէ ես այս կամ այն
պատճառով չեմ համապատասխանել պ. պ. Բաղ-
դասարանի և Օբոյեանի «փոփոխութիւն» այդ
մի այնպիսի հանգամանք չէ, որ ընդունակ
լինի ինչ մտաւանդութիւն պատճառելու։ Ան-
ցնտւում եմ բուն հարցին։

Անցեալ տարի ես ստացայ պատիւի մի դրա-
մաւոր ծրար։ Ինչ ընդունովին անյայտ պ. Օբ-
ոյեանը խնդրում էր ինչ թող տալ արտա-
տպել Ալվազովսկու Ալբոմի մէջ իմ այն կենսա-
գրական գրուածքը, որ տպված է 1890 թւա-
կանի Մշակում։ Պարտք հարցնում էր ինչ,
կարծիք է Ալբոմի խմբագրութիւնը կրճատում-
ների ենթարկել իմ այդ յօդուածը։ Հեռագրով
պատասխանելու համար նամակում գրված էր
1 բուբլի։

Ես հեռագրեցի, որ համաձայն եմ արտա-
տպելու, բայց այն պայմանով, որ ոչ մի փո-
փոխութիւն չը լինի գրուածքի մէջ։
Այսօր, երբ Ալբոմը իմ առջև է, ես տես-
նում եմ, որ պ. Օբոյեանը մինչև վերջը չէ
կարողացել մնալ մի օրինաւոր մարդու պար-
տաւորութիւնների մէջ։ Հարցնել գրուածքի
տիրոջ համաձայնութիւնը, հարցնել արտատը-

պութեան պայմանները—այս բոլորը շատ լաւ
է, շատ զեղեցիկ է։ Ինչ գրուածք է, այս
քաղաքավարութիւն էր։ Բայց յետոյ Ալբոմի
հրատարակիչները աւելորդ են համարել ին-
դուսել իմ պայմանը և վարվել են իմ գրուած-
քի հետ այնպէս ինչպէս իրանք են կամեցել։

Նրանք պարտաւոր էին. 1) Յիշել, որ այդ
յօդուածը արտատպված է Մշակի լրագրից,
որովհետեւ ես պ. պ. Բաղդասարեանի և Օբոյե-
անի հրատարակութեան համար չեմ կազմեղ
այդ կենսագրութիւնը, մի հանգամանք, որ
անպատճառ պէտք է յայտնի լինէր ընթերցող
հասարակութեան. 2) Թող տալ, որ ընթերցող-
ը իմանայ, թէ որտեղից եմ ես քաղել Ալվա-
զովսկու կենսագրութիւնը. այս պատճառով
նրանք իրաւունք չպիտի համարէին ջնջել իմ
յօդուածին կցած նախաբանի գոնէ այն մասը,
ուր ես ասել եմ, թէ կենսագրութիւնը ես հա-
նել եմ «Русская Старина» ամսագրից (1878
թ.)։ Իմ գործի մեծագոյն մասը համարեալ
Թարգմանութիւն է այդ ամսագրից, իսկ Ալ-
բոմի հրատարակիչները կամեցել են ներկայ-
ացնել նրան իբրև ինքնուրոյն գրուածք։ Հաս-
կանում են պարտքներ իրանց արածի ամբողջ
տգեղութիւնը։ Հասկանում եմ, որ իմանալ այդ
վարմունքով նրանք առիթ են տալիս, որ ինչ
մեղադրեն զրական գողութեան մէջ։ Ենթա-
դրեցեք, պ. պ. Բաղդասարեան և Օբոյեան,
թէ վաղը մի մարդ, որ ծանօթ է «Русская
Старина» ամսագրին, կարող է կարգաւ իմ
յօդուածը և եղբակցեցնել, որ ես ամեն ինչ
վերցրել եմ այնտեղից, բայց պարտաւոր չեմ
համարել յիշել աղբիւրը։ Ի՞նչ կը պատահա-
նէք այդ գէպերում եթէ չը լինի էլ մի այդ-
պիսի մարդ, միթէ զգուշի չէ գրական գողու-
թիւնը, ուրիշի գործը սեփականացնելը։

Պ. պ. հրատարակիչները կամեցել են անպատ-
ճառ խմբագրել էլ լինել, ունենալով այսքան
վայրենի հակացողութիւն գրական էթիկայի
մասին։ Նոյն այդ խմբագիր դառնալու տեն-
չանքն է հարկադրել նրանց հանել մի երկու
մեծ կտորներ իմ գրուածքից։ Նրանք, իհարկէ,
կարող էին չը հաւանել իմ գրուածքը, կա-
րող էին ասել լաւ կենսագրութիւն կազմել...
բայց երբ միանգամ ես պայման եմ դրել տպել
ունեցեք որեւէ փոփոխութիւն նրանք պար-
տաւոր էին կամ ընդունել պայման, կամ բո-
լորովին չարտատպել գրուածքս։

Առհասարակ, շատ ուշադիր խմբագիրներ են
պ. պ. Բաղդասարեան և Օբոյեան։ Այդ ես
նկատեցի մի տեղ միայն, ես գրել եմ «Թիֆ-
լիս», իսկ պարտքները ուղղել են ինչ և գրել
«Տփլիս»։ Խմբագրական սրբախի մեծ ընդու-
նակութիւն և հետաքրքրիւն։

Շատ և շատ ցաւում եմ, որ թող տուեցի
պ. պ. Բաղդասարեանին և Օբոյեանին արտա-
տպել իմ գրուածքը։

Լէօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Պետերբուրգի Կայսերական Աշխարհագրա-
կան ընկերութիւնը առաջիկայ ամսու կուղար-
կէ Կովկաս, երկրաբանական և կենդանաբանա-
կան հետազոտութիւնների կատարելու համար,
մի արշաւանում, որի գլուխն անցած կը լինի
գնդապետ Նէզովսկի։ Այս գիտնական արշա-
ւանումը գնդապետ Նէզովսկի կազմակեր-
պում է իր սեփական միջոցներով։

Չորեքշաբթի, փետրվարի 19-ին, գիւղացի-

վրանի մի անկիւնը ու բարձրացրեց չրջագնե-
տի փէշերը. ես իսկոյն չորի մի ճոռոց լսեցի։

Մի րօպէից յետոյ Թագուհին, սպիտակ, մա-
քուր չորի կտորներ ձեռքին, չըթած իմ առաջ
լուսնում էր ու կապում վէրքս մի քնքար զոյժ
նման Մոռացած և վէրք և նրա ցաւը ես այդ
րօպէին նայում ու հիանում էի նրա եռանդ
ու սէր արտայայտող գէպով։ Եւ թուում էր
ինչ, թէ ես վարուց, շատ վաղուց պաշտում էի
այդ ոսկեգանգուր, թաւուտ մազերը, այդ կա-
պոյտ, ծովի յատակի նման խոր աչքերը, այդ
քնքար սպիտակ ձակատը, այդ բարակ յօնքե-
րը, այդ նուրբ չրթնեցները, այդ հրէշտակա-
յին սիրտը...

VII

Վէրքիցս բաւական արիւն էր հոսել և ինչ
ընդունովին ու հասպառ արեւի ծանաղարհորդու-
թիւնը շարունակելու մասին մտածելն անգամ
աւելորդ էր։ Ես պառկած էի ցածրիկ վրանի
տակ, թախտի վրա, և օր ու գիշեր տանջվում
էի վէրքիս կակից։ Բայց այդ կակից աւելի
ինչ տանջում էին ջիւղն ու ծարաւը։ Կէս-քուն
կէս-արթութեան գլուխս անքնքարի մէջ ես յաճախ
տեսնում էի, թէ իբր չրթում եմ լեռնային թա-
ւուտ դալարիներում, վճիռ աղբիւրների շուր-
ջը, թեթիւ տուած Թագուհու հետ... Ձեռ-
տալիս արդեօք այդ զառանցանքների մէջ ես
նրա անունը, իմացնաւ արդեօք նա օրտիւ
գաղտնիքը—չը գիտեմ, ես միշտ, երբ ուշա-
վրա էր լինում, տեսնում էի նոյն կարեկից
հայեացքը, նոյն քնքար, մանրակրկիտ հոգա-
ցողութիւնը։

Տեսնելով, որ իմ գրութիւնս հեռագնաց վա-

նեիրն ճորտութիւնից ազատելու տարեդարձի
օրը, Թիֆլիսի ուսումնարաններում պարտա-
վածք տեղի չունեցան։ Միջնակարգ դպրոցնե-
րում, ինչպէս, օրինակ, ընթացական դպրոցում,
աշակերտները բաժանվեցին խմբերի, և ուսու-
ցիչները իւրաքանչիւր խմբի համար կարգացին
դասախօսութիւններ պատմական այդ նշանա-
ւոր անցքի նշանակութեան մասին։

Ձինտորագրութիւնից հրէաների խուսա-
փումը դադարեցնելու նպատակով 1886 թւա-
կանին կառավարութիւնը մի օրէնք հրատա-
րակեց, որի զօրութեամբ ամեն մի հրէայի
համար, որ փախուտ է տալիս զինուորա-
գրութիւնից, խոշոր դրամական տուգանք է
գրվում այն ընտանիքի վրա, որին պատկա-
նում է փախուտ տուողը։ Չը նախելով այս
միջոցին, 15 տարվայ ընթացքում, երբ գոր-
ծադրվում է այդ օրէնքը, տուգանքի են են-
թարկվել ուսու լրագիրների ասելով, միմիայն
Վիլնայի նահանգում 2,500 ընտանիք, որոնք
միասին վճարել են մօտ 800,000 րուբլի։

Մեզ խնդրում են հաղորդել, որ կիրակի,
փետրվարի 23-ին, Վէտցելի թատրոնում, տե-
ղի կուննայ մի ներկայացում ուսերէն լեզ-
ւով Թիֆլիսի VII քաղաքամասի չքաւոր երե-
խաներին հովանաւորող ընկերութեան օգտին
Կը խաղան Օստրովսկու «На бойкомъ мѣстѣ»
երեք գործողութեամբ կոմեդիան և «Дѣвѣщикъ
подвѣтъ» վոքովիլը։

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Վարդանանց
առնի օրը թեմական դպրոցում կայացաւ սո-
վորական հանդէս. ներկայ էր երկսես մեծ
բազմութիւն, որի զպրոցի վարչութիւնը
հրաւիրել էր յատուկ տոմասկներով։ Ուսուցիչ
Յովհաննիսեան կարգաց մի զգածված բէթէրատ
«Հայրենիք» խորագրով, որը լաւ տպագրու-
թիւն թողեց հանդիսականների վրա, միւս դա-
սախօս Լ. Աղախանեան շատ սառն էր և թոյլ.
Դէմութեանի խումբը հրաշալի երգեց «Լեռնե-
Ամպերը», որը և կրկնել տուեցին։

ՎԱՆԱՐՇԱՊԱՍԻՅԹ մեզ գրում են. «Ամսիս
11-ին այստեղ հողին յանձնեցին Բագուում
սպանված երիտասարդ Շաւարշ Մալխասեանցի
մարմինը. թաղման ներկայ էր հազարն բազմու-
թիւն։ Պատարագից յետոյ դամբարանական խօսեց
ձեռնարանի նախկին տեսուչ Կարապետ վարդա-
պետը, որը կարճատու կերպով նկարագրելով
հանգուցեալի ողբերգական մահը, կանդ առաւ
նրա մօրեղբայր՝ պ. Աւետիս Օնանանեանցի
այն կարգադրութեան վրա, որ փոխանակ մե-
ռելանայ—քեզին տալու որոշել է մի գումար
նոյն օրը բաժանել տեղական աղքատներին և
100 ր. էլ նուրբիւ է տեղական չքաւոր գիւղա-
ցիներին երկրագործութեամբ պարագելու, իսկ
տարեկան տոկոսները բաժանվին տեղական
չքաւոր ընտանիքներին որպէս նպաստ։ Մե-
ռելների թաղման ժամանակ հանգատարանում
մեռելահացքներին տալու անպատակ և վնա-

տանում է, օրիորդները վճեցին տեղափոխել
ինչ գիւղ և բժիշկ հրաւիրել քաղաքից։ Հան-
գիստ պառկած պատգարակի վրա, որ սարքել
էին օրիորդները և որ գրված էր չորս հսկայ
տղամարդկանց ուսերին—այլ կերպ անհնար էր
կատարել այդ տեղափոխութիւնը—ես լողում
էի, կարծես, լեռնային անուշաբայր օդի ալիք-
ների մէջ։ Յիշում եմ, որ նեղ, դժուարակոխ կա-
ծաներով լեռներից ցած իջնելիս, երբ ինչ տա-
նող գիւղացիներին մէկն ու մէկը մի սխալ քայլ
էր անում, Թագուհին ձի էր արձակում վախե-
ցած և ամեն անգամ դիմում տանողներին։

—Չգոյշ ի սէր Աստուծու, դուք կարող էք
վայր գլորել հիւանդին։

Գիւղացիք հանգստացնում էին նրան. բայց
ամեն անգամ Թագուհու ձիւր արձագանգ էր
տալիս իմ ստուռ և լցնում նրան սիրոյ և ե-
րախտագիտութեան ջերմ զգացմունքով։

Մի քանի ժամվայ ճանապարհորդութիւնից
և անքնադառ գէպի վայր, գէպի մի խոր ձոր
իջնելուց յետոյ մենք հասանք Հ. գիւղը։ Ինչ
զեղեղիցի կերպի միակ, փոքր էլ շատ յար-
կաւ սեփականում, քահանայի տանը։ Հետեւալ
օրը քաղաքից եկաւ օրիորդների հրաւիրած
բժիշկը և ես, նրա տուած գեղերի ու խոր-
հուրդների վրա՝ սկսեցի կամաց-կամաց կազ-
մել իմ հիւանդի համար և այնպէս համարեալ մի ամբողջ
ամիս մենք ստիպված էինք մնալ այդ միւս
նոյն գիւղում։

VIII

Այս, ինչ երջանիկ օրեր էին այդ օրերը,
վաղանցուկ երազի նման արագութեամբ թը-
ռած-գնացած հիւանդութեան այդ կարճատե-

սակար սովորութեան մասին շատ է գրվել
լրագիրների մէջ, բայց Վաղարշապատում ոչ
ոք մինչև այսօր քաղութիւն չէ ունեցել չը հե-
տեւելու այդ վատ սովորութեան, վախենալով
մի կողմից բամբասանքից, իսկ միւս կողմից
որ իբր թէ, եթէ մեռելահաց չը լինի, ոչ ոք
չի մասնակցի թաղման և յուղարկութեան
Սալայն պ. Ա. Օնանանեանի կատարած փա-
տը պարզ ապացոյց է, որ այդ պատճառա-
նութիւնները միմիայն քեզին ուսողներն են
հնարել և որ հասարակութիւնը պատրաստ է
ընդունել ամեն մի խելացի գործ։ Ցանկալի է,
որ պ. Օնանանեանի բարի օրինակին հետեւ
ւողներ շատ լինեն։

ԱՍՏԱՐԱՊԻՅԹ մեզ գրում են. «Երեքշաբթի,
փետրվարի 11-ին, տեղիս վերստիպեղիսների
ժողովարանի դահլիճում, ղեկավարութեամբ
պ. Յ. Թումանեանի և օր. Մ. Խոսեանի տե-
ղի ունեցաւ մի համեստ հայկական համերգ
յօդուտ Ասիաբազի հայ կանանց Բարեգործա-
կան ընկերութեան համերգը երեք մասից էր
բաղկացած, առաջին երկուսը քառաձայն ազ-
գային և ժողովրդական երգեր, որոնք բաւա-
կան աչոյ էին կազմված խմբի թէ համեմա-
տութեամբ (խումբը 30 հոգոց էր), իսկ եր-
րորդւմ խաղացին Օսկան Պետրովիչն էն
կիւնքում կատակերգութիւնը, որ շատ թոյլ
էր։ Տեղի ունեցան և ասիական ու եւրօպա-
կան պարեր. դաշիճը կիսով չափ դատարկ
էր։ Ցանկալի է, որ տեղիս սիրողները երկու
չաբաթ մի անգամ, կամ ամիսը մի անգամ
ներկայացուցին տալիս, որով բարոյապէս
ներկայացուցին իրանց, որով ժողովրդին, որը ամ-
բողջ տարին զրկված է լինում հայերէն
ներկայացումներից։

ՂԱՂՈՉ գիւղից (Ալեքսանդրօպոլի գաւառ)
մեզ գրում են. «Նախագահական իշխանութիւնը
առաջարկութիւն է արել բանալու Ղաղաջ
գիւղում ուսումնարան, տալով դասնարանից
միասնաբար նպաստ միջոցաւոր համար 500
րուբլի, իսկ երկրպագանի—700 րուբլի։ Այս
մասին սպասվում է դաւառամասի ոստիկա-
նապետի հարուն և ժողով կազմելուն։ Նախ
քան այս հարցը կարգադրվել, մի քանի գիւ-
ղեր աշխատում են, որ ուսումնարանը իրանց
մէջ լինի, աչքի առաջ չունենալով յարմարու-
թիւնը, տեղի դիրքը և կենտրոնը։ Ցանկալի
էլ լինէր եսականութիւնը մի կողմ դնելով,
ուսումնարանը թողնել իշխանութեան որոշած
տեղում, ինչպէս կենտրոն հասարակութեան, և
փոխանակ միջոցաւոր, ընդհանուր ուսումը բա-
նալ երկրպագան ուսումնարան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԼԵՒՈՆ XIII ՊԱՊԻ ՅՕՐԵԼԵԱՆԸ

Այս միջոցին բովանդակ կաթօլիկ եկեղեցին
ստանում է իր հովուապետի նշաւաւոր յօրհիւս-

օրերը։
Չը նայելով ֆիզիկական ցաւերին, որոնք
երբեմն անգթաբար տանջում էին ինչ, չը նախ-
ելով որ օրեր շարունակ ես ստիպված էի ան-
շարժ պառկել մէջքիս վրա, իմ սիրտս լիքն էր
անսահման ցնծութեամբ։ Թոււմ էր ինչ, թէ
եւ ապրում եմ մի նոր, անծանօթ, հէքիաթ-
ների կախարդական աշխարհում, ուր զեղանի
արքայադուստրը ոչ մի րօպէ չէ հետախույս
մանից, նստում է ժամերով անկողնիս մօտ,
իր քնքար ձեռքերով շոյում, փայփայում է
ձակատս, երբ նրա վրա նկատում է ֆիզիկա-
կան ցաւի ակամայից արտայայտված տանջան-
քը, նայում է երեսին ջերմ կարեկցութեան
համակրանքի թովիչ աչքերով, փայտում է մեղմ
անոյշ փայտով, գուշակում է իմ ամենափոքր
ցանկութիւններս և աշխատում է րօպէալիս
կատարել նրանց։ Օ՛, առաջին սէր, սրբան
քաղցր եւ դու, բայց և սրբան կոյր, սրբան
ցնորական ու զառանցող։

Եւ ես արդէն զառանցում էի ապագայի մա-
ւին... տեսնում էի ոսկէ երազներ, ստիզում
էի ինչ և Թագուհու համար մի դիւթական
երջանկութիւն, որ չը պէտք է ունենար ոչ
վերջ, ոչ վախճան։

Բայց երբ է հէքիաթը համապատասխան
իրականութեան, ո՞վ կարող է պարծնալ, թէ
իր երջանկութիւնը եղել է աւելի տեղեկական
քան իմ, որ շարունակվեց ամբողջ երեք շա-
բաթ։ Սալայն անցաւ մի քաղաք էլ և ամեն
ինչ փոխվեց։

(Կը շարունակվի)

նոր Փետրվարի 7/20-ին լրացաւ 25 տարի ան-
օրից, երբ Հոսի պապը Լեոն XIII ընտրուեց
քահանայապետ հռոմէական եկեղեցու, հանգու-
ցեալ Պիոս IX-ի փոխարէն, և 18-ին (մարտի
3 յ. տ.) թագադրուեց երեքկարգեան խորովի
Նրանից առաջ միայն 2 անձ լրացրին այդ եր-
կար ժամանակամիջոցը, առաջինը՝ Հոսի ա-
թոռի հիմնադիր Պետրոս առաքեալն էր և եր-
կրորդը Պիոս IX:

Ձը նայելով իր խոր ծերութեան՝ կաթօլիկ
եկեղեցու պետը դեռ ևս պահպանում է իր ոյ-
ծերն ու մտաւորական կարողութեան առողջու-
թիւնը և շարունակում է եռանդով վարել իր
հովուապետական բազմազան պաշտօնը:

Երբ 1878-ին Պիոս իններորդ վախճանվեց,
հռոմէական եկեղեցու վարչական գործերը շատ
խառնաշփոթ դրութեան մէջ էին: Իտալական
նորակազմ միապետութեան զօրքերը դրաւել
էին յաւիտենական քաղաքը, պապի աշխարհա-
կան իշխանութիւնը կործանվել էր և նրա բա-
րոյական ոյժը զգալապէս տեղի էր տուել
նոր հռոմէական առաջն. Պապը համարեալ թէ
բանտարկված էր Վատիկանում: Մեծ էր զայն-
քայլը իտալական «յալիտակիզ» (ռեզուրպա-
տոր) իշխանութեան դէմ՝ կաթօլիկ եկեղեցու
նախապետութեան բարձրագոյն շրջաններում:
Կարգիւնների մի խումբ, որոնց zelanti (ե-
ռանգուն) անունն էին տալիս, բայց իրօք
ծայրայեղներ էին՝ պնդում էր թէ իբրև ընդդէմ
Իտալիայի դէմ, նոր պապի ընտրութիւնը
պէտք էր կատարել Հոսիի և Նոյն-իսկ Իտա-
լիայից դուրս, օրինակի համար Մալտայում:
Այս intransigent կուսակցութեան հակառակ,
չափաւորների խումբը լսել իսկ չէր ուզում
Հոսիից հետանալու միտքը: Վերջինների գլխա-
ւորն էր Վատիկանի եկեղեցու տեսուչ (ca-
merlingo) կարդինալ Յովակիմ Պէլլի: Բնական
է, որ ամբողջ աշխարհ, մասնաւոր կաթօլիկ-
ները, մեծ հետաքրքրութեամբ սպասում էին
այս պապարի արդիւնքին և մինչդեռ ժամա-
նակ ընտրութեան հետևանքին, տեսնելու հա-
մար, թէ ինչ դերք էր ընկելու Պիոս IX-ի
յաջորդը: Բարեբախտաբար, չափաւորների կու-
սակցութիւնը յաղթեց: Հոսիից հետևանքով
միտքը թողնվեց, և կարդինալները փետրվարի
18-ին (ն. տ.) հաւաքվեցին կոնկլաւի (պապի
ընտրողական ժողով): Ըստ օրինի՝ ընտրու-
թեան ամբողջ անողութեան ժամանակ, ըն-
տրողները (միայն կարդինալներ) պէտք է
բացարձակապէս փակված մնան յատկապէս
այդ օրվայ համար յարմարացած, արտաքին
լուսամուտներից զուրկ խցիկներում, որպէս
զի ոչ մի յարաբերութիւն չունենան դրսի աշ-
խարհի հետ և որեւէ կողմնակի օտար ազդե-
ցութիւն չը կրեն: Գուէարկութիւնը կատար-
վում է օրը 2 անգամ, մինչև մեծամասնութիւն
գոյանալը, ամեն մի անհետևանք քուէարկու-
թիւնից յետոյ քուէներ թերթիկներն անմի-
ջապէս այրվում են հէնց այնտեղ, տաճարում,
յատկապէս պատրաստված վառարանի մէջ, և
երբ այդ թերթիկների փոքրիկ ծուխը (stimu-
lus) մասնաւորապէս հաստատված ծխանից
դուրս է գալիս՝ դա նշան է արտաքին աշխար-
հին, թէ քուէարկութիւնը ապարդիւն է ան-
ցել:

Երկու օր տեղը ընտրական գործողութիւնից
յետոյ, 1878 թվ. փետրվարի 20-ին (ն. տ.)
քուէների մեծամասնութիւնը շահեցաւ վերոյի-
շեալ կարդինալ Պէլլի, որ և հռչակվեց Հոսիի
աթոռի գործակալ՝ Լեոն XIII անունով: Գա-
թօլիկ եկեղեցու պետերի համար մի նշանաւոր
մարդաբանութիւն կայ Միջին դարերից մնա-
ցած, որի հեղինակն է ա. Մարգարիտ, և որը
երկու խօսքով, բոլոր գալիք պապերի անձնա-
կան նկարագիրն է գուշակում: Այդ մարգա-
րութեան մէջ Լեոն XIII-ի համար ասված է
Lumen in coelo (լոյս՝ երկնքում): Ի նկատի
ունենալով կարդինալ Պէլլիի առերևոյթ տկար
կազմուածքը՝ շատերը ենթադրում էին, թէ
նրա իշխանութիւնը շատ կարճ կը լինի և նա
կանցնի իբրև մի կայծակ. բայց երբ այդ մեկ-
նութիւնն անաջող դուրս եկաւ, Դաւիթապա-
րեալ տոբերը ենթադրեցին, թէ մարգարեա-
կան խօսքերը ակնարկում էին Պէլլիների ազ-
նուական տոհմի գինադողմի վրա գտնված
գիւտաւոր աստղի իսկ վերջերս սկսած մեկնելը,
թէ այդ խօսքերը վերաբերում են նոր քահա-
նայապետի լուսաւոր գործունէութեան:

Այսպէս թէ այնպէս՝ Լեոն XIII իրօք նշանա-
ւոր տեղ է գրաւում Հոսիի պապերի շարքում,
մասնաւոր թէ նրան համեմատելով իր նա-
խորդի հետ, որ յայտնի է իր անհայտ ընտու-
րութեամբ և նեղ լատինական ոգովը: Նոյն-
իսկ կաթօլիկ եկեղեցու հակառակորդները
խոստովանում են Լեոն XIII-ի անձնական մեծ
արժանաւորութիւնները և թէ նա իր ներառիտ,

շրջանայեցի և հեռաւոր քաղաքականութեան
և համբերող ոգու շնորհիւ Հոսիի աթոռի նշա-
նակութիւնը բարձրացրեց, և իրօք, կաթօլիկ
եկեղեցին այս կողմից շատ բան է պարտական
իր այժմեան գլխին: Բոլոր եւրոպական կա-
ռավարութիւնները իրանց պետերով միասին
սկսած մեծ յարգանքով վերաբերվել դէպի նը-
րան իսկ երբ հանդիսաւոր օրերում իր sedia
gestatoria-ում (ձեռնների վրա տանվող աթոռ)
նստած երևում էր հաւատարմութիւնի աշխար-
հի ամեն կողմից Հոսի թափող ունիտարիտե-
րի ոգևորութիւնը անսահման էր լինում: Լեոն
XIII կամաք-կամաց քաղաքական աշխարհում
այնքան մեծ ազդեցութիւն ձեռք բերեց, որ
նոյն-իսկ երկաթէ կանցլէրը չը վարանվեց խո-
նարհվել նրա առաջ, յետ վերջերս իր կուլ-
տուրկամայֆի օրինագիւր և հաշտութիւն կնքեց
պապի հետ: Աւելի քան մի անգամ Լեոն XIII
միջնորդ դատաւոր ընտրվեց կաթօլիկ և ոչ-
կաթօլիկ պետութիւնների կողմից՝ իրար մէջ
ծագած տարաձայնութիւնների լուծման հա-
մար: Լեոն XIII-ի առանձին հոգածութեան
առարկայ էին ընկերական խնդիրները, իր ժա-
մանակ մեծ ազդեց շահեց նրա յայտնի չրջա-
բերական բանտերական դատական, հասա-
րակ ժողովրդի վերաբերմամբ, որոնց նա քա-
րոջում էր քրիստոնէական սօցիալիզմի Այս բո-
լորը նոր երևոյթներ են և ժամանակի գրոյնն
են կրում իրանց վրա:

Գալով ընդհանրապէս արեւելեան ազգերին և
առանձնապէս մեզ, հայերին, Լեոն XIII իրա-
ւամբ կրում է «արեւելաւոր» տիտղոսը: Նրա
գահակալութեան առաջին գործերից մէկն է
եղած փոխել իր նախորդի համած «Մինչև
դարձեալ» կոնդակի տրամադրութիւնները, որ
աւելի յայտնի է իր լատինական բառովը՝
«բէվէրստուրա»՝ Նորընտիր պապը՝ այս կեր-
պով՝ Պիոս IX-ի կարգադրութիւնների հակա-
ռակ, վերահաստատում էր հայ-կաթօլիկ եկե-
ղեցու ազգային ինքնուրոյնութիւնը: Նա միշտ
պաշտպան է հանդիսացել արեւելեան եկեղեցի-
ներին և առանձին հոգածութիւն է ցուց տուել,
որ հայկական ծէսը, լեզուն, ժողովրդական
ոգին, ընտրողական կարգերը և այլ դարաւոր
աւանդութիւններն ու իրաւունքները անաղարտ
պահպանվեն հայ-կաթօլիկ եկեղեցու մէջ: Մին-
չև անգամ առանձին շրջաբերական կոնդակով
և խիստ պատիժներ սահմանելով զգուշացրել
է բուն լատին կղերին՝ չը խառնվել հայ-կա-
թօլիկների ներքին գործերում և լատինական
ծէս չը տարածել նրանց մէջ: Նոյն-իսկ ար-
դէն լատինացիներին նա յորդորում էր վերա-
դառնալ իրանց հայրենի ծէսին և աւանդական
կարգերին: Նա աշխատել է, որ հայերը կարե-
ւոր դերք ունենան նոյն-իսկ Հոսիում, կաթօ-
լիկութեան կենտրոնում, ուր յատկացրել է ա-
ռանձին ընդարձակ բնակարան «Հայկական
Վարժարանի» (սեմինարիա) համար, որ մնում
է դուռ հայկական և օրին նուիրել է հասու-
թաքի կալուածներ մօտ 1 միլիոն ֆրանկի
արժողութեամբ: Բացի դրանից Հոսիի 2
բարձրագոյն կղերանոցներում հայերից լեզուի
մշտական դասախօսութիւն է հաստատել Այս
ամեն գործից մէջ, ասում է Լեոն XIII հայ-
կաթօլիկ կղերին ուղղած իր մի շրջաբերա-
կանում, միշտ հոգացիք, որ հայ ծէսն և լե-
զուն, որ նուրբեցում, գեղեցիկութեամբ և մե-
ծանշակ մատենագրաց թերթի փայլած է, ի-
րան պարտ ու պատշաճ պատուին մէջ պահվի,
և շրջաբերական վերջում նա յորդոր է կար-
գում հայ-կաթօլիկներին՝ «միշտ բարեխօս ու-
նենալ չեղ Մարտիրոս սուրբ Գրիգոր Լու-
սաւորիչը»: Պապի կարգադրութեամբ միշտ
գտնվում է Հոսիում մի հայ-կաթօլիկ եպիս-
կոպոս, որ Կ. Պոլսի պատրիարք-կաթօլիկոսի
ներկայացուցիչն է պապի և պրօպագանդայի
մօտ և միանգամայն պէտք է հայ ծէսով ձեռ-
նադրէ հոգևորականութիւն ընդունել ուղող
հայ պատանիներին:

1895 և 96-ի սոսկալի տարիներում Լեոն
XIII իր հրապարակական ճառախօսութեամբ
մէջ կարդինալաց ժողովում, առանձնապէս հա-
մակրանք յայտնեց ընդհանուր հայ ազգին, յա-
նուն քրիստոնէութեան և մարդասիրութեան,
գիւղատնտեսական միջամտութիւն կատարեց
պետութիւնների մօտ և մի մեծ զորամական
նպաստ (50,000 ֆրանկ) էլ ուղարկեց յօգուտ
կոտորածի զոհերին:

Լեոն XIII իր քահանայապետութեան 25-տ-
մեայ շրջանի հետ միասին փետրվարի 17-ին
լրացրեց նաև իր կեսնալի 93-րդ տարին և
մտաւ 94 տարեկան Ամբողջ քաղաքակիրթ աշ-
խարհի լրագրողները, առանց ցեղի և գուանութե-
ան խտրութեան, այս առիթով ընդարձակ
թղթաւածներ են նուիրում և յայտնում իրանց
յարգանքն ու համակրութիւնը մեծ ծերունուն,

մաղթելով, որ նա լրացնէ իր բազմադիւն
կեսնալի հարեւրամակը:

Միայնում ենք և մեր համեստ ձայնն այս
մաղթանքին, յանուն Կոկիասի կաթօլիկ հայերի:

Սարուխան

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԱՍՏԱՆԻԾ

Սարգուհար, փետրվարի 5-ին
Երեք օր առաջ հեռագիրը Հայան սահմանա-
գլխից յայտնեց, որ բամբակի և բրդի մաքուր
տեղութեան կողմից ընծայված է, բայց աւելի
մանրամասն տեղեկութիւն ստացվեց Մալաթից
պատուով, որով և պարզվեց որ բամբակի, բրդի,
մրդեղէնի և մորթու (ոչխարի և այլի) մաքուր
ընծայված են տեղութեան կողմից, որոնցից բա-
ւական մեծ քանակութեամբ արտահանվում է
Ռուսաստան, իսկ Ռուսաստանից ներմուծվող
ապրանքի մաքուր բաւական թիւթաղիք են:
Այսպիսի մի անսպասելի լուր մի տեսակ
զարմանք է պատճառում մարդուս ինչպէս
յայտնի է՝ Պարսից տէրութեան գլխաւոր եկա-
մուտները կազմում էին մաքսատներն, և այդ
եկամուտով ծածկվում էին թէ՛ տէրութեան
ծախքերն և թէ՛ վճարվում էին օտարի անցեա-
լում Ռուսաստանից արված փոխառութեան
մասերն, ձեռք քաշել միանգամայն այդպիսի մի
օգուտէտ և միակ աղբիւրից՝ պարսից կառա-
վարութեան կողմից, կարելի է ասել, հրաշք է,
բայց յոյս ունենք որ նա կը պարզվի գործին
աւելի տեղեկի անձանց կողմից:

Այս տարի Ռուսաստանում շնորհիւ երեք ամբողջ
տարիների ձիւնի և անձրևների պակասութեան,
կատարեալ հացի թանցութիւն է. եթէ ներկայ
տարվայ յունվար ամսում չը տեղար մի քանի
տնգամ ձիւն՝ սովը կտաքեալ էր բաւի
բուն նշանակութեամբ Յիթի ներկայ գարնան
տեղան ամենապակասը 3 յորդառատ անձրե-
ներ, ապագան յուսալի է, թէ ոչ այլ ևս պիտի
թողնել և փայլել: Այժմ ցորենի խալվորն
(18 պուղը) 200 դանն է (34 ռուբլի), գարու
խալվորը 140 դանն—մի չը տեսնված արժեք
Ռուսաստանի համար: Ժողովրդի դրութիւնը կրի-
տիկական է:

Ինչպէս ամեն տեղ՝ նոյնպէս և այստեղ, պօս-
տաները բեղիկացրին ձեռքը անցնելուց
յետոյ, նախկին դրութեան մէջ են մնացել:
Ինչի փոփոխութիւն չը կայ: Մի բան ամենից
զարմանալի է. 3 տարի է՝ նոր սև փողեր են
դուրս եկած, բայց դեռ ժողովրդի մէջ գոր-
ծածական չեն. օրինակ Նաբաթ վերցնում են,
Մալաթ ոչ, Սարգուհար գծաւորութեամբ, աւելի
հին սև փողեր են գերադասում: Եթէ ցան-
կանում են, որ նոր սև փողերն աւելի գործա-
ծական լինեն, պիտի հներ բոլորովին հաւաքեն:

Իսր. Մեկիւ-Բարայեթեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Անգլիական մամուլը ընդհանրապէս յոյսե-
րով է նայում մակեդոնական ռէֆորմների Բ.
Դոան ընդունած նախագծի վրա: Միայն «Daily
Graphic» լրագիրը կասկածելի է գտնում
այն արագութիւնը, որով Բ. Դոանը համա-
ձայնվեց ընդունել աւստրո-սլոնական պրօգ-
րամը: Լրագիրը կարծում է, որ Բ. Դոանը աշ-
խատում է շուտով վերջացնել բանակցութիւն-
ները եւրօպական պետութիւնների հետ և ապա
երեսի վրա թողնել այդ նոր ռէֆորմները:
Վիեննայից, ընդհակառակը, հեռագրում են
«Berliner Tageblatt» լրագրին, որ Բ. Դոան
արագ պատասխանը ցույց է տալիս, որ Բ. Դոան
որ դիտաւորութիւն ունի խաղաղ կերպով լու-
ծել մակեդոնական հարցը: Լրագիրը նրանով է
բացատրում Բ. Դոան արագ պատասխանը, որ
Կ. Պոլսի գերմանական դեսպանը համոզեց Բ.
Դոան, թէ աւստրո-սլոնական ծրագրի յու-
տափոյթ իրագործումը հէնց իրան թիւրքիայ-
ին շահաւէտ է:

—Բերլինից «Русск. Вѣд.» լրագրի թղթա-
կիցը հեռագրում է փետրվարի 14-ից. «Գեր-
մանական թագաժառանգ պրինցի Բենիկ հա-
մալարանից հեռանալու առիթով երեկվայ
հանդէսի ժամանակ, համալարանի թէկաօրը
գիմեց նրան մի ճառով և ասեց. «Համալարա-
նանը դպրոց չէ պատրաստի պլանով. սակայն
իւրաքանչիւր մարդ, ով գիտութեան ծարա-
ւունք կարող է նրա վրա հասնել, առաջադիւ-
կաներից ընտրել յարմարագոյնը: Յոյս ունենալ,
որ ձեր բարձրութիւնը կը տանք այստեղից
յարգանք դէպի գիտութիւնը, որը բացառա-
պէս ճշմարտութիւն է որոնում, և որ շատ բա-
ղափարներ, որ ձեզ աւանդում էին ազատ և
անկախ մարդիկ, կը ծառայեն ձեր ապագայ
կենսութեամբ յօգուտ ձեր և հայրենիքի: Ապագայ
կայսրը, մնալով իր հասակակիցների չրջանում,
ձգտում էր, որ իր դաստիարակները և բնկեր-
ները ճանաչեն և գնահատեն նրա մէջ մար-
դուս: Վերջում թէկաօրը ինչեցից միջոցիկ
Մեծի խօսքերը, «Գիտութիւնը տալիս է հո-
գեկան ուրախութիւններ, փափկացնում է
բարեբը, զին է առաջ կենսալին, հեռացնում է

է մահվան երկիւղը» Թագաժառանգ պրինցը
պատասխանեց, որ թէպէտ ինքն չը կարողա-
ցաւ այնքան նուիրվել գիտութեանը, ինչպէս
ինքն այդ կը ցանկանար, այնու ամենայնիւ
ինքն անսահման երախտապարտ է համալարա-
նային և յոյս ունի լրացնել պակասները ինք-
նակրթութեամբ: Բոլոր ուսանողներին թա-
գաժառանգը շնորհակալութիւն յայտնեց ըն-
կերական բարի յարաբերութիւնների համար
և բարեմաղթեց համալարանին բարգաւա-
ճումն շատ և շատ դարեր:

«ՄԵԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՏԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

19 փետրվարի

ՎԻԵՆՆԱ: Մինիստր-նախագահ Կերէր, պա-
տախանելով պատգամաւոր Վուկովիչի հար-
ցապնդումին մակեդոնական անցքերի առի-
թով, ասեց Բերլինի դաշնագրով առաջարկված
ռէֆորմների թիւրքիայի ձեռքով մտցնելու վե-
րաբերմամբ, որ այժմեան նախագիծը, որի
հիմնական գծերը համաձայնութիւն են գտած Բեր-
լինի դաշնագրի ստորագրող պետութիւնների
կողմից և ընդունված են Բ. Դոանից, նպատակ
ունի խեղդել տեղական քրիստոնէայ ազգա-
բնակչութեան վտանգաւոր դժգոհութիւնը պայ-
մանների բարեփոխման միջոցով, մասնաւոր Նե-
րօպական թիւրքիայի մի քանի տեղերում
Պետութիւնները հաստատապէս վճռել են հոգ
տանելու, որ թիւրքիան իրագործէ իր յանձն
տուած պարտաւորութիւնները և չեն բաւակա-
նանայ հասարակ խոստմունքներով: Պետու-
թիւնները որոշված ձեռնարկութիւններ իրա-
գործումը հաստատապէս տեղեկումը գրեցին
գիւղամատիական ներկայացուցիչների խիստ
կոնտրօլի տակ, և չէ կարելի այդ գնահատելի
գրաւական չէ համարել այն բանի, որ բարե-
խաղձանքը կիրառողներն մասնաւորապէս նա-
խագծումները Գրիստոնէայ ազգաբնակչութիւնը
կատարելով հիմք ունի լիակատար վստահու-
թեամբ վերաբերվելու պետութիւնների գիտա-
ւորութիւններին և ջանքերին և պարտաւոր է
զգուշանալ ամեն տեսակ բռնի վարմունքներից,
որոնք իրաւունք կը տային թիւրքիային յար-
ձակողական միջոցներ գործ դնելու Աւստրո-
Ունգարիայի անտեսական շահերը թիւրքիայում
պաշտպանելու վերաբերմամբ դիւրամատիական
ներկայացուցիչների վրա պարտաւորութիւն է
գրված առանձին ուշադրութիւն դարձնել այդ
հարցի վրա:

ԼՕՆԴՈՆ: Համայնքների ժողով Վիկի այն
հարցապնդումին, թէ ինչ ձևով Ռուսաստանը
ցանկութիւն յայտնեց անմիջական յարաբերու-
թիւնների մէջ մտնել Աւստրոստանի հետ,
Կրանբորն պատասխանեց, թէ դրա մասին տե-
ղեկութիւնը Լոնդոնի ուսական դեսպանից է
բղիւում:

ԼԻԻՔՆԻ: «Губернская Вѣдомости» լրագի-
րը տպեց հարկային տեսուչ Ուստինովի յօ-
դուածը Դադատանի լեռնային հարստութիւն-
ների մասին, յօդուածի մէջ ասված է, որ նա
գտել է երկաթէ հանքեր մինչև 89% մետալի
բովանդակութեամբ, արծաթ-արծիճեալ հան-
քեր, մարտը սուրբի և դեզնանողի հանքեր:

ԲՈՒԴԱՊԵՏ: Պատասխանելով ծափուկու-
հարցապնդումին կոմս Լամզորֆի Վիեննա
ճանապարհորդելու առիթով, Սէլլ առում է, որ
Աւստրո-Ունգարիայի արեւելեան քաղաքակա-
նութիւնը նպատակ ունի Բալկանների անկա-
խութիւնը պահպանել, նպատակ նրանց զար-
գացմանը, բարեկամական յարաբերութիւններ
կապել նրանց հետ և պահպանել անփոփոխ
Թիւրքիայի status quo-ն: Այդպէս է 1897 թվ.
նոսա-աւստրիական համաձայնութեան նպատա-
կը: Լամզորֆի ճանապարհորդութիւնը նպա-
տակ ունի ընթերցանել այնպիսի նախագիծ
կազմել, որը առիթ չը տար առանձին համա-
ձայնութիւնների և ըստ էութեան չը փոփո-
խէր 1897 թվ. դաշնագրի որոշումները: Ռու-
սաստանը և Աւստրիան իրանց դժգոհութիւնը
յայտնեցին Բալկանների վրա յեղափոխութիւն
առաջացնելու ամեն փորձի դէմ: Եթէ սակայն
յեղափոխական գործողութիւններ տեղի ունեն-
նային, ոչ ոք, նրանց թիւում և Ռուսաստանը,
չեն արգելի Թիւրքիային եռանդուն ճնշող մի-
ջոցներ գործ դնելու: Ընդհանուր համակրու-
թիւնը, որ արտայայտվեց ռէֆորմների նախա-
գծի ընդունելութեան առիթով, որոնք պէտք է
ծառայութիւն մատուցանեն խաղաղութեան
գործին՝ յոյս է ներշնչում, թէ այդ ռէֆորմներն
յաջողութիւն կունենան:

ՍՕՖԻԱ: Մակեդոնական Կոստանների գի-
ւանդ խլված և յանձնված է քաղաքապետու-
թեան Արտակարգ հեռագրական առաջադրու-
թեամբ ներքին գործերի մինիստրութիւնը
սահմանապահ զօրքից պահանջում է ամենա-

աշխարհը հսկողութեամբ պահպանել սահմանները: Կիսապաշտօնական «Волгария» լրագիրն ասում է, թէ ինքը դո՛ւ է քեֆօրմների նախագծից, որի նպատակն է ոչ թէ լուծել Բոլշա-րիային հետաքրքրող արեւելեան հարցը, այլ բարեկամել մակեդոնացիների դրութիւնը: Սրանց վերաբերմունքը դէպի այդ քեֆօրմները ցոյց կը տայ, թէ սրբաբոյ ճիշտ են ընտրված միջոցները:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Կոնգրեսը հաստատեց երկու պալատների մասնաժողովների միացած նստի ղեկավարութեանը: Ամերիկա ուղղվող գաղթականութեան վերաբերելով օրինագծի մասին Գաղթականական տեսուչների իրաւունք է տրված թող չը տալ անարխիստների գաղթականութիւնը: Անձնական աուրքի քանակութիւնը բարձրացվում է մինչև երկու դոլլար:

ԼՕՆԴՈՆ. Բացվեց միացած առևտրական պալատների տարեկան նստաշրջանը: Պարլամենտի անդամ Ռոլֆերի առաջարկութեամբ ընդունվեց որոշում, որով կառավարութեան առաջարկվում է միջոցներ ձեռք բերել անդլիական շահերը պաշտպանելու Պարլամենտում, ի նկատ առնելով Ռուսաստանի ազդեցութեան հետեւ-հետէ անելը այդ երկրում:

ԿԱՐԱԿԱՍ. Վէսեցուէլայի ղեկավարական նա-ւերը, որոնք պաշտոնաբար ժամանակ բռնված էին անգլիացիների կողմից՝ վերադարձրվեցին: ԲԱՐՑԵԼՈՆԱ. Կարուպանո լքվեց զօրքերից և գրավեց ապստամբների:

ԲԵՐԼԻՆ. Փետրվարի 18-ին և 19-ին այս-տեղ զգացվում էր ուժեղ երկրաշարժ:

20 փետրվարի
ՇՎԵԴԻԱ. Մեծ դուքսը ուղևորվեց Կոնստան-տինի շարժմանը կացնելու մօր՝ մեծ դքսուհի Անաստասիա Միխայլովնայի մօտ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Սենատը հաստատեց ծովային միջխառնութեան նախաձեռնութեան 8,187,291 դոլ-լարի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Կոմս Կրոնզէյն նշանակված է Ֆինլանդիայի մամուլի գործերի գլխավոր կա-ռավարութեան նախագահ:

Փետրվարի 19-ին Բարձրագոյն հսորձված են Գեօգրաֆիկի բոջոյակներ—Արեւելեան Սի-բիրիայի 9-րդ գնդին այս մակագրով «Տեան-ձինի մօտ արեւելեան ամրոցը առնելու հա-մար 1900 թվոցին»։ Արեւելեան-Սիբիրիայի 10-րդ հրացանաձիգ գնդին այս մակագրով «Փեկինի առանց համար 1900 թվոցին» և Արե-ւելեան-Սիբիրիայի 12-րդ հրացանաձիգ գնդին՝ այս մակագրով—«Տեանձինի համար 1900 թը-ւին»:

Խմբագիր՝ ԱԷԲՈՒՆԻԴ ԲԱՆԻՍԻ
Հրատարակիչներ՝ ԹԱԿՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԻԱՆ
ԻՍՍԼԱՅ ՄԵԼԻԻԲԱՂԱՄԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՆԱԺՈՂՈՎԸ յայտնում է, որ այս փետրվար ամսի 25-ին, առաւօտեան ժամի 10-ին, մաս-նաժողովի նախագահի ընտրականում (Սուղբե-նայա փողոց, № 68) նշանակված է անուրդ՝ 1) կապալով տալու առաջագործական աշխա-տանքներ, 2) կոտրելու և տաշելու մօտ 170 քառակուսի սաժէն քար անկիւնների համար և 3) մատակարարելու մօտ 5000 փուլը երկա-թեայ գերաններ: Յիշված աշխատանքների կա-տարման և կապալի պայմանները կարելի է տեսնել ամեն օր մասնաժողովի գործավարի մօտ (Սուղբենայա փողոց, № 10, բն. 7): Այն անձինք, որոնք ցանկանում են մասնակե-րել աճուրդին, պէտք է ունենան անցագիր կամ վկայութիւն իրանց անձնագրութեան մասին և գրաւական ներկայացնեն ոչ պակաս քան 50% յայտնողի գնի: Գրաւականները կարող են լի-նել առձեռն դրամ կամ տոկոսաբեր իդրեր, որոնք ընդունվում են իբրեւ գրաւական: ար-քունի կապալներում:

ԲԱՑՎԱՆ Է ԲԱԳԻՈՒՄ
ՊՐՕՄԷԹԵՆՈՍ

Ընկերութեան ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑ ԵՒ ՊԱՀԵՍՏ
Ցանկացողները կարող են գտնել թէ ի՞նչ քա-րէն և թէ հայերէն իւրաքանչիւր հեղինակու-թիւնից: Միանուագ գնողներին տրվում է ձեռնառու գեղջ:

Հասցէ՝ ԿՐԱՍՆՈՎՈՅԿՈՅ ԵՒ ԵՄԻՍՏՈՎՈՅ
ուлицы, домъ Амброва, телефонъ № 840.
Օտարաբաղադրացիները կարող են դիմել
Баку, Т-во «Прометей».
Ընդունվում է Գրիգոր Արժրուճու կենսա-գրութեան բաժանորդագրութիւնը: Գինն է 3
ր. Փառակալը երեք գիրքը 4 ր.: 4—5

НОВАЯ КНИГА
**СОВРЕМЕННЫЕ АРМЯНСКІЕ
ПОЭТЫ**

Ов. Ованнисянъ, Ов. Туманянъ, Ал. Па-турьянъ, Лев. Мануэльянъ, Ав. Исаакянъ, въ переводахъ, К. Бальмонтъ, Ив. Бунинъ, Г. Галина, Н. Климовой, Ап. Коринфскаго, Л. Уманца и др. Подъ редакціей Льва Уманца и Аракела Дервишъ.

Цѣна 1 руб.
Продается въ Т и ф л и с ъ, въ Цен-тральномъ книжномъ магазинѣ.

Москва, складъ изданія въ книжномъ магазинѣ „Трудъ“, Тверская улица.

1—5

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատա-նը, փետրվարի 27-ին, ցերեկվայ ժամի 1-ին, նշանակված է երկրորդ աճուրդ՝ կապալով տա-լու կողմերից, սայրերից և խոշոր ու մանր կենդանիներից վերցնող տուրքը Մնացակա-նեան կամայից անցնելու համար: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուպրավայի 4-րորդ բաժան-մունքում բոլոր լի օրերը՝ առաւօտեան ժամի 9-ից մինչև 3-ը: Փակ ծրարներ կընդունվեն մինչև փետրվարի 27-ը: Աճուրդի համար իւ-րաքանչիւր մասնակցող պէտք է ներկայացնէ 15,000 ռուբլու գրաւական:

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

նի ուսուցիչ՝ ՍՏՐՈՒՄԵԼԻՍԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԸ
ԵՒ ՄԵՂՈՒԱՊԱՀԱԿԱՆ իրեղենների կենտրո-նական պահեստը ընդունում է պատուէրներ՝ մատակարարելու մեղրապահական գործիք-ներ, մեղրատու բոյսերի սերմեր, արհեստա-կան մոմաթերթ և Դաղանի սիւտեմի փեթակ-ներ՝ լորենու փայտից՝ հատը 7 ռուբլով:

1—3

Վ Ե Ն Ե Մ Ի Կ Ի ց ա տ ա ց Վ Ե ց

Հ. Ղ. ԱՄԵՆԻ ՅԵՇԱՏԱԿԻՆ ՆՈՒՐՎԱՍԾ

«ԶԳՆՏՄՈՒՆԷ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Խմբ. Գր. Բալասանի

Գինն է 40 կօպ.

Գլխավոր պահեստը միմիայն «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրախանութում,

8—5

ԹԻՖԼԻՍԻ Կենտրոնական Գրախանաւանցում

վաճառվում են, ի շարք այլ հրատարակութիւնների, հետեւեալ գրքերը՝

ՍՈՒՆԴՈՒԿԱՆՑ ԳԱՐԻ., Վէրի մէկ գոհ, Կօմէդիա հինգ արարւածով, Բ. տիպ., ուղղած—1 ր., «Ամուսնանալ», Կօմէդիա հինգ արար., Բ. տիպ., ուղղած—1 ր., «Պէպո», Կօ-մէդիա երեք արար., Բ. տիպ., ուղղած—50 կ., «Գիշերուան սարը խէր է», կատակերգութիւն մէկ արար., Բ. տիպ., ուղղած—30 կ., «Օսկան Պետրովիչն էն կինը», կատակերգութիւն մէկ արար.—30 կ.:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ ԷՄԻՆ., «Դամոկլեան սուր», դրամա երեք արար., Բ. տիպ., ուղղած—75 կ., նոյնը 2 արար.—50 կ., «Վայրենի», կատակերգութիւն մէկ արար.—50 կօպ., «Բարեգործութեան դիմակի տակ», դրամա 5 արար.—1 ր., «Զարք», կատակ մէկ արար. և «Մարտախիթ իրողութիւն»—1 ր., «Կոռուպացիոնը ես էի», Կօմէդիա—վոլյովի երկու արար.—50 կ., «Մօղա», Կօմէդիա մէկ արար.—50 կ., «Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար», կատակերգ. մէկ արար.—50 կ., «Սէր կամ մահ», պիէս մէկ արար.—50 կ.:

ՍԱՐԴԱՐԵԱՆ ԱՆԻՄ., «Դօքտոր Թաթոս (հեղինակ. Շչեքովի) կատակ-վոլյովի մէկ արար.—20 կ., «Օրթոմալու քէֆը կամ Զգրու բան է», ֆարս-վոլյովի մէկ արար.—20 կ., «Զուարճալի ժամեր իր բանալով»—50 կ.:

ՊԻՕՇԵԱՆ Պ., «Յուշեր», վիպակ—1 ր., «Ես», պատկեր—20 կ., «Միջէլ-աղենց Արդիւլը», զրոյց իրական կեանքից—20 կ., «Արցիկ», պատկեր—25 կ., «Յուշերներ»—1 ր., «Սկիզբն երկանց, վէպ—1 ր. 20 կ., «Բղէճ», վէպ—1 ր. 20 կ., «Ցեցեր», վէպ—1 ր. և «Կոռուպացիոնը», վէպ, Բ. տիպ., 1 ր. 30 կ.:

ՇԱՆԹ., «Երազներ» (գիշերօթիկի մի յուշատեսիլ)—40 կ., «Դարձ», վէպ—40 կ., «Վերծին», վէպ—60 կ. և «Դերասաններ», վէպ—40 կ.:

ՇԻՐՎԱՆՉԱԿԷ., «Նամուս», Բ. տիպ.—1 ր., «Բաօս», վէպ—1 ր. 50 կ., «Ճառագարը», վէպիկ —50 կ., «Զուր յոյսեր», վէպ—1 ր. և «Կրակ»—30 կ.:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԱՆԻ ԵՐԵԿԵՐ (Վէրջ Զայաստանի, Օվանսի և այլն)—1 ր.:

ՓԱՓԱՉԵԱՆ ՎՐԹ., «Պատմութեան» (ուշ յայտարար) —50 կ., Սանթօ (հայ բոլորների կեանքից) —30 կ. և «Հայ-բոլորներ» (տղգագրական ուսումնասիրութիւն)—50 կ.:

Դիմել՝ ԵՒ Տիֆլիս, ԵՒ Ենտրալնայա Կնիշնայա Երգովա. (Ե. ո.) 6—6

„Ա Ր Օ Ր“ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

կարճատեղ գաղարկումից յետոյ դարձել է մեր սեփականութիւն և վերսկսել է ապա-րանական բազմատեսակ պատուէրներ ընդունել:

Պատուէրները կատարվում են մաքուր, ժամանակին և բարեխիղճ գներով: Տպարանին կից կայ կազմարան, գծարան և թղթավաճառանոց:

Սրբագրական բոլոր աշխատանքը ուղարկութեամբ և առանց վարձատրութեան կատա-րում ենք:

Հայ Թարգմանիչներին և գլխավորապէս գրողներին տրվում է որոշ զիջում:

ՏՊԱՐԱՆԱՏԵՐ ԺԱՄՆԱՐԵԱՆ

2—6


ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Խ. Ս. ԽՐԻՍՏՕԴՈՒԼԻԴԻ

որը իր ընտիր յատկութեամբ վաղուց համբաւանք է դարձել՝ Յունաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում և Կովկասում: Գինը ցանկացողներին դիմել ա իրան՝ պ. Խրիստոփորովին, մինչև փետրվարի 15-ը, «Գովկաս» հրատարակչութիւնը № 14, Բ) Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան մօտ Թիֆլիսում և Գ) Ֆրանսիական ընկերութեան գրասենեակում, նախկին Արժրուճու գալէրէյում № 127:

6—6

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ
ԵՒ ԲԱՏԻՆԱՅԵ ԽՐԱԿԱՆԵՐԻ ԶԱՄԵ
ԱՄԵՆԱՐԱՐՁՐ ՊԱՐԳԵԻ (GRAND-PRIX)
Պարիզի ցուցահանգէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԵՆՈՑՆ
ՐԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՅԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՄ
որ հիմնված է 1860 թվականին
Պատում են ԲԷՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ գինի ու խաղողի զարմեղ կրճիւղերի հետեւեալ կնիքի վրա



Մանուանդ ընկերութեան հիմնարկութեան «1860» թվականի և «Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՄ», [սուրբերի վրա՝ կարմիր եռանկ-կիւնու մէջ (գործարանի կնիք)]:

Ս. ՊԱՆԱԿՈՒԹԵԱՐԻ ԾԱԽՍ ԿԱՏԱՐԱՐՈՒՄ Ե

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԷԼԷՐ“ առևտրական տունը
Ս. Պետերբուրգում, Մոսկովյում, Բրախմ, Օդեսայում, ԲՈՍՏՈՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ ԵՒ ԵՒՐՈՊԱՆԻԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆԻԱՆ